ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆԻ ՈՒՂԵՐՁԸ

ԵՐԿՐԱՇԱՐԺԻ ԶՈՀԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԻ և ԱՂԵՏՆԵՐԻ ԴԻՄԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՕՐՎԱ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Փամբակ համայնքի սիրելի՛ բնակիչներ, դեկտեմբերի 7-ը հայ ժողովրդի պատմության ճակատագրական էջն է:

Տարիներ առաջ այս օրը մեր ժողովուրդը ստիպված եղավ բախվել այնպիսի մի արհավիրքի, որի հետևանքները հաղթահարելը մինչ օրս պահանջում է գերմարդկային ջանքեր ու միախմբություն:

Այն իր անջնջելի հետքը թողեց մեր երկրի հասարակական ու տնտեսական զարգացման վրա, իսկ մարդկային կորուստի ցավը պատմությունն ու ժամանակը երբևէ չկարողացան ամոքել:

Սիրելի՛ հայրենակիցներ, այս օրը ոչ միայն ավերիչ երկրաշարժի զոհերի հիշատակի, այլև հայ ժողովրդի վերածննդի օրն է:

Եղբայրաբար ձեռք-ձեռքի տված հայ ժողովուրդը կարողացավ ապրել ու արարել: Երբեմնի փլատակների վրա նորից վեր խոյացան ստեղծարար հայ մարդու շենքերը, ցավի մեջ պարփակված տները լցվեցին մանկան ծիծաղով, և հենց դա եղավ հայ մարդու վերածնունդը:

Սիրելի՛ հայրենակիցներ, թող այսուհետ օրացույցի վրա տեղ գտնեն միայն հայ ժողովրդի հաղթանակի օրերը:

Թող յուրաքանչյուրիս սրբազույն պարտքը լինի մեկ քայլով նպաստել մեր հայրենիքի շենացման ու պահպանման գործին:

Հավերժ հիշատակ բոլոր անմեղ հոգիներին, որ զոհ գնացին արհավիրքին: Խաղաղություն և բարեկեցություն Հայաստանի Հանրապետությանը և Հայ ժողովրդին:

Հարգանքներով՝ Սուրեն Կոստանդյան